

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևավայրով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

• ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ •

ԱԹԱՆԵՍ ՄԵՆԱԼՅԱՆ

ԱՐԵՎԱՑԻՆ ԳՐՈՒ

• ՊԵՏՏՐԱՍ •

891-99

U-40

- 6. NOV 2011

№ 10 ՏԵՐԻՍ ԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ № 10

891.99

4-40 ^{err}

ԱՊԱՆԵՍ ՍԵՆԱԼՅԱՆ

ԱՐԵՎԱՅԻՆ ԳՐՈՒ

1008
34424



ԱՐԵՎԱՅԻՆ ԳՐՈՂ

Արեային զբոհ : Արեային զբոհ :
Արեային վոսկու անեղբական շերտեր :
Յես պարզել եմ ահա կոյի յերդի դըու
Ու զբոհում ենք մենք, ու առնում ենք բերդեր :

Այսպէս՝ այս եր լավը, կանաչավոր յերկի՛ր,
Քո սրտի զարկերը համրում եմ համառ :
Խորհրդային աշխատ' ըհ, տափաստաններ բերքի՛ր,
իմ հույզերի գարուն, իմ նարնջե ամառ :

Ճանապարհ եմ զնում իմ յերդերի առուն,
իմ յերդերի չուգո՛ւն, իմ առավո՞տ .
Գնա՞ հեռաստաններ, խոսի՛ր, խոսիր առույդ
Ու զիբքեր զբալիր դու փառալոր :

Մտիր հյուղերը զորչ, վերջին տունը հողե,
Ու պասմիր նրանց մեր այդաբացից :
Ասա՞ այս պոետը ձեղ ե ներբողել —
Իր առաջին զբքով, — յերկաթի ու հացի :

Դեռ վո՞չ մեռ վո՞չ մի զբոհ չի յեղել այսպես :
Այսպես պարզ ու պայծառ, — հառկանալի :
Իմ խնդությունն ել վարարել ե քեզ պես,
Խորհրդային յերկիր, կարմիր գալիք :

Դեռ ի՞նչքան առավոտներ, այդաբացներ կլան
Այնքան մոտիկ, ո՞, մեզ այնքա՞ն մոտիկ :

իմ քաղաքներ, գյուղեր, իմ գիգանտներ հսկա,
Յես ուզում եմ Տասնել ձեր առավոտին:

Յես ուզում եմ հիմա անցնել մի նոր ուղի,
Հեռաստաններ գնալ, հեռաստաններ,
Բարիկադներ առնել, հինը մասնել ծուխի,
Դասակարգիս կովի գրոշը տանել:

Յերգել իմ այս պրչով մեր պայքարի
Համառ ընդվզումը դալիք որվար:
Վաղջույն իմ յեղայրներ հողի՝ քարի՝,
Իմ յերգերի գարուն, իմ որորան:

Արևային զբոհ: Արևային զբոհ:
Արևային վոսկու անեղբարկան շերտեր:
Հասած հեռաստանում՝ յես պարզել եմ դրոշ,
Յերբ զբոհներ յեղան—առանք բերգեր:

Զ Ա Գ Ե Ս

Փչում ե մի բարակ քամիսարից
Ու ծառերն են շրջում անողնական.
Լենինը ժպտում ե մեր մեծ դարից
Պարզում է ձեռքը, ձեռքը՝ բետոն հագած:

Լենին, Լենին, Լենին— ձեռքը պարզած,
Կարծես ընթացք ե տալիս ջրին:
Վորագես անասելի մի քարաժայու,
Տե՛ս, կայանն ե կանգնել պիրկ բետոնից:

Ահա իրիկունը լուսե, լուսե,
Վորագես նարնջագույն մի առավոտ.
Այստեղ քրտինքն ե վարար հոսել
Ու ձեռքեր են յելել—յերկաթավոր:

Տե՛ս, շենքեր են կանգնել սարի դոչին,
Բանվորական տմերը,— բանվորական:
Մշուշվում ե հեռլում մի կաթնագույն փոշի,
Հեռաստանն ե ժպտում լույսի շորեր հագած:

Մի՛րտ իմ, սի՛րտ իմ, սի՛րտ իմ,— հիմա խնդա՛,
Վորագես մի լենինիստ գու կուռ մարտիկ,
Այս ջրերի հունը յերեկ թնդաց,
Յերբ բազուկներ յելան յերկաթավինդ:

Յերբ իշում ե մթին մի իրիկուն
Ու ծառերն են շրջում անողնական,—
Լենինը ժպտում ե իր մեծ դիրքում
Ու պարզում է ձեռքը՝ բետոն հագած:

ԳԱՐՈՒՆ

Գարուն ե , գարուն ե արդեն ,
Մառերը շրջում են լուսերդ .
Դաշտերում մեր ի՞նչքա՞ն վարդեր
Ու յելող յերկաթի հույզեր :

Կորիողի դաշտերի վրա
Իշել ե նարնջե արև .
Վողջույն քե՛զ , իմ ծաղկող ամա՛ռ ,
Վողջույն ձե՛զ , իմ կանաչ սարեր :

Մետաղի մի թուչուն առույդ
Ժպտում ե դաշտերին , հանդին .
Յերգում ե կարկաչող առուն ,
Արտերը ծլում են խանդից :

Արել ժպտում ե նազուն ,
Ո՛ , կանաչ , ո՛ կանաչ հանդեր ,
Տրակտորը ի՞նչ լավ ե վաղում ,
Ի՞նչ լավ ե այս թումբը քանդել :

Գարուն ե , գարուն ե , գարուն ,
Մառերը շրջում են լուսերդ .
Դաշտերում մեր ի՞նչքան առու
Ու յելող յերկաթի հույզեր :

ՀՆՁՎՈՐ ԱՂՋԿԱՆ

Կռութ ե յիր քաղում յերեկ վոսաբորիկ ,
Իմ կոլխոզնիկ Մարտ :
Հողջունում եմ հիմա լուսե առավոտիդ ,
Իմ հազեցած կարոտ :

Վորպե՛ս մի բորբ կարոտ , կարկաչում ե յելող
Առավոտը համառ :
Մի անջրտի ամառ :
Հեռվում հորանջում ե հին կապույտը մեռնող՝

Ու լուսնային մի կեռ , հուրհրատող մանգաղ
Բոնած քո մատներով ,
Հունձ ես , հունձ ես անում , դով հովի հետ բարակ ,
Յեր արտերում :

Քեզ ժպտում են վոսկի կռութները նազով
Ու փափում հնձի՛ր :
Ու սրբում են նրանք քո քրտինքը վաղող ,
Վորպես վոսկե վրձին :

Յերբ թեքվում ե որը , իջնում ե իրիկում ,
Դու քայլում ես առույդ .
Ու հնջում ե ձայնդ իրիկնային միգում ,
Վորպես վարար առու :

Ահա՛ , ահա՛ , ահա՛ , մեր բաղուկները կոշտ
Ու արտերը հնձած :
Հաղթանակից յելած , վորովես կարմիր դրոշ ,
Իմ կոլխոզնիկ ցնծա՛ :

ԼԵՆԻՆՅԱՆ ՄԱՐԴ

Կոռութ եյիր քաղում յերեկ վոտաբորիկ,
Իմ կոլխոզնիկ Մարո՛:
Վողջունում եմ հիմա լուսե առավոտիդ,
Իմ հաղեցած կարոտ :

Առաջ, առաջ, առաջ, իմ ընկերներ արի,
Առաջ, առաջ, առաջ,— համառ, հատու:
Մենք դիրքեր ենք բռնել մեծ պայքարի,
Վո՛չ մի, վո՛չ մի նահանջ ու վհատում:

Կյանքի կառուցումը հիմա այնքան բարդ է,
Առաջ, առաջ, առաջ այս լենինյան դարում.
— Մեր մեծ ուսուցիչն ե այս ճամբեքը հարթել
Ու մտքելն են ծաղկել, վորպես բերքի գարուն:

Յերեկ բարբիկաղում նա իր ձեռքը պարզեց
Միլյոն բանվորների, միլյոնների համար:
Առաջ, առաջ, առաջ, իմ ընկերներ բրոնզե,
Ախենք վերջին մարտում անդիջող ու համառ:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄԱՐՇ

Չա՞ն, բացվում ե ահա մի առավոտ,
Չընչալ ե, ձընչալ ե, ձընչալ ե, ջա՞ն.
Մենք դուրս ենք զալիս դաշտ-բորբ ծարավով
Յեկաթի պես ամուր ու անսասան :

Մեր բաղուկները տալիս ենք հողին,
Բերքի կարոտն ե մեր կամքը կիզում.
Մեր մկանները գործով են հղի,
Լարկաչում ե դաշտում դործի լեզուն :

Չա՞ն, մեքենան ուրախ քրքջում ե
Ու ակոսներ շարում դարնան հերկի.
Մոտիկ առվակները քչքչում են,
Այժմ բոլորի հետ դու յել յերգի՛ր :

Չա՞ն, բացվում ե ահա մի առավոտ,
Չընչալ ե, ձընչալ ե, ձընչալ ե, ջա՞ն,
Մենք դուրս ենք զալիս դաշտ՝ բորբ ծարավով,
Յեկաթի պես ամուր ե անսասան :

Զ Ա Ր Կ Ե Ր

I

Պարզում եմ յես ձեռքս հիմա
Յերկի՛ր, քո նոր մըրգահասին.
Փռում եմ յերգերս քո դիմաց—
Իմ յերգերը քո մի մաղին :

Ի՞նչքան վոր ուժ, ջիղ ու մկան,
Ի՞նչքան յեռանդ վոր կա իմ մեջ,
Բոլորը քե՛զ, քո կառուցման,
Քո բարձրացող շենքերին վես :

II

Շենքեր բարձր, շենքեր բարձր
Ու յերկնահուզ ծինելույզներ,
Սի՛րտ իմ, յեղի՛ր զգա՛ստ, կարծր,
Խլենք բերգեր — բարձրություններ :

Կառուցում ենք բետոնապատ
Յերկնակառկառ հսկա շենքեր .
Պատերի պես կանգուն, հպարտ—
Մենք տալիս ենք յերկաթ ձեռքեր :

Մենք խառնում ենք ուժ ու մկան,
Սիրտ ներշնչում ամեն քարի,
Ու ասում ենք՝ մենք դեռ կգանք՝
Հաղթանակած կուռ պայքարից :

Ամեն բոպէ, ամեն վայրկան
Գիտի զգալ կառուցման ոեր .

Մենք խառնում ենք ուժ ու մկան
Ու տալիս ենք ուժեղ մի ձեռք :

Բարձրանում ենք զարմանալի
Դժվար, դժվար ճանապարհով,
Մեր դեմ ահա մի լույս գալիք
Ու կառուցման մի հուր կարոտ :

Շենքեր, բարձր, շենքեր բարձր,
Ու յերկնահուպ ծխնելույղներ .
Լինենք հաստատ, զդաստ, կալծր —
Խենք բերդեր — բարձրություններ :

ՏՈՂԵՐ ԱՆՆԱՎԵՐԴՈՒՆ

Յես ուզում եմ հիմա մեր պղինձը յերգել,
Պղնձի լեռները դեղին և պղինձն հողում .
Շարել այրող յերգեր, պայքարի վառ յերգեր,
Վորպես այս պղինձը՝ հրահոսուն հեղուկ :

Ահա քլուզգները իջնում են ու քանդում,
Պղնձաղեմ մարդկանց ձեռքերի ուժով :
Մենք լարում ենք վերջին մեր մկաններում
Հաղթանակի զարկը ու ճիղը մեղ հուզող :

Հարվածային լինել: Լինել մարտիկ .—
Պլանների համար, — պլանների համար :
Այս ե վորոշումը մեր յերկաթիւ —
Լինել այս պայքարում ամրակամ ու համառ :

Այս ժայռոտ լեռների խորխորատում
Ինչքան ձեռքեր են յերկաթացել .
Ի՞նչքան զարկեր են իջել հատու
Ու մոխրագույն չերտեր — պղնձացել :

Պղնձե ամեն մի շերտ հողի տակից յելնող՝
Տեղ ե բացում թշնամու զադաղի համար .
Մենք ամրացնում ենք դիրքերը մեր նոր —
Նահանջում ե թշնամին մեր դրոհից համառ :

Յես ուզում եմ հիմա մեր պղինձը դովել,
Պղնձի լեռները դեղին, պղնձի հանքն հողում ,
Շարել այրող յերգեր, պայքարի վառ յերգեր,
Վորպես այս պղինձը՝ հրահոսուն հեղուկ :

ԳՅՈՒՂԵՐԻ ԼԻՐԻԿԱՆ

1. Հին գյուղը

Գյուղե՛ր, գյուղե՛ր, իմ գյուղե՛ր,
Գյուղեր՝ ընկած անոթի,
Հողին կպած գորչ հյուղեր,
Հյուղեր՝ մեռնող կարոտից :

Թնդանոթն ե խանձել ձեր
Առաստաղը, տանիքը.
Գյուղեր՝ ընկած գորչ, անձև,
Գյուղեր, մեռնող կարոտից :

Ժամի զանդն ե զողանջել
Մռայլ, ծանոթ զողանջով,
Նրանք ժամ են միշտ կանչել
Անդործ մարդկանց հորանջող :

Գյուղե՛ր, գյուղե՛ր, ո՛, գյուղե՛ր
Գյուղեր՝ ընկած մութ, տարտամ.
Արթիլադեմ մութ հյուղե՛ր,
Յեկրաթի դեմ անտամ :

Գյուղեր՝ կարոտ յերկաթի,
Չուղուն եր պետք ու բետոն.
Դու իմ յերկիր ո՛, կաթի—
Ի՞նչքան պետքեր ու հետո...

Բակում ընկած աթարի
Գորչ դեղերը մղլած,
Մեղկ Հիսուսն ե խավարից
Զոքել բէիդ րդկտած :

Դաշտում վո՛չ մի կարկաչյուն,
Վոչ մի կանչող հասկ հասած,
Մութ գոմերում անարյուն
Տավարները մահացած :

Գյուղե՛ր, գյուղե՛ր մշուշէ,
Գյուղեր՝ ընկած անոթի,
Գյուղեր՝ վորպես մութ գիշեր,
Հյուղեր՝ մեռնող կարոտից :

2. Նոր գյուղը

Գյուղե՛ր, գյուղե՛ր իմ ծաղկած,
Գյուղեր՝ կանաչ ծովի պես.
Գյուղեր՝ ընկած դաշտերում—
Աշխատանքի թինդի մեջ :

Գյուղում քլոնդը չաշեց,
Մաշինները զնդացին.
Մեր կուռ յերթը չառաչեց—
Հողի կարոտ զգացինք :

Վոսկի վարսեր կան հասած,
Արտեր գեղին, նարնջե,
Մենք քաղաքի և գյուղի
Կապն ենք ամուր կամքընել :

Մանդաղի տեղ՝ մաշինա,
Արորի տեղ՝ տրակտոր,
Արեն ինչքան խաչի հա՛,
Մենք հերկում ենք կարոտնի :

Կոլսողական իմ դաշտեր,
Կոլսող կաթի ու հացի,
Բաղուկների պիրկ վաշտեր,—
Յերգ իմ, վաստահ բարձրացի՛ր :

Դաշտում յերեկ ջուր չկար,
Առուն յերեկ դատարկ եր,
Յերեկ հասկերը կծղած—
Եսոր հորդուն վտակներ :

Կյանքը այնքան սպայծառ է,
Վողջո՞ւյն յերդի իմ առո՞ւ,
Ո՞, մրգահաս իմ ծառեր,
Իմ հույզերի հորդ գարուն :

1008
34424

ՅԵՐԳԱ

Այդ մենք ենք, այդ մենք ենք գալի՛ս,
Բամբակի ծով բեռը ուսած,—
Վողջո՞ւյն քե՛զ, իմ յեկող գալի՛ք,
Իմ հոսո՞ւն, իմ հոսո՞ւն լուսայդ :


Նստել ե բամբակի ծովը
Դաշտերի, դաշտերի վրա,
Տես՝ ի՞նչքան քո շուրջը զով է,
Ես ի՞նչքան բամբակի քուլա :

Թփերը ո՞, բերքով ծանրած
Ժպտում են իմաստուն խոհով,
Թվում ե՝ վարսեր են սանրած,—
Ո՞, ի՞նչքան աշխատանք, կորով :

Ի՞նչքան քաղցր ու անուշ է
Մասնակցել բամբակի կանչին,
Ու յերդեր, ու յերդեր հուշել
Քո սրտի քուլաղաբդ բախչից...

Գործում են մկանուտ ձեռքեր,
Այդ մենք ենք գործում վստահ,
Այդ մենք ենք ստեղծում յերդեր
Այնքան պարզ, այնքան ջինջ, հստակ:

Այդ մենք ենք, այդ մենք ենք գալի՛ս,
Բամբակի ծով բեռը ուսած,—
Վողջո՞ւյն քե՛զ, իմ յեկող գալի՛ք,
Իմ հոսո՞ւն, իմ հոսո՞ւն լուսայդ :



ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մարգովին

Բարովկ, բարովկ, բարովկ Մարդո,
Ա՛խ, եղ ինչպես, ա՛խ, եղ ինչպե՞ս
Յերեկ ընկած տնում անդործ,—
Եսոր բանվոր հերոսի պես...

Յերեկ մի վորբ աղջիկ ելիր
Էնկած ցեխում մի փողոցում,
Զեռքդ պարզած սրան—նրան,
Խենթ քամին եր քեզ սղոցում:

Դու դործարան մտար եսոր
Ու մուացար քո կյանքը հին...

Իլիկներն են դառնում արագ
Շուրջդ ժխոր, աղմուկ ու թինդ,
Դու հաղթանակ եսոր տարար՝
Սրիակամ— յերկաթավինդ:

Քուլաները մեր բամբակի
Զեռքից ձեռք ե անցնում շտապ,
Դու մանում ես թելեր անդին—
Քո կոչուացած ձեռքը քշտած:

Դու չես հոգնում յերբե՞ք, յերբե՞ք,
Ո՛, ժալտում ես նուան նման,
Հարկավոր են խորը յերգեր—
Աշխատանքիդ թափի նման:

Այցի յեկա եսոր քեզ մոտ,
Վաղուց ծանոթ պատերին քո.
Խինդս առավ հրե կարոտ,
Վողջումեցի քեզ ջինջ յերգով:

Բարովկ, բարովկ, բարովկ, Մարդո
Ա՛խ, եղ ինչպես, ա՛խ, եղ ինչպես
Գործարանում գառար բանվոր—
— Աշխատում ես հերոսի պես...

ԲԱԳՈՒ

(Դարձի յերգերից)

I

Վերադարձա կրկին յես :
Սբուռմ իմ յերդ ու երա :
Վողջույն, վողջույն, Բարդու, քե՛զ
Ելրտ իմ, խինդով դու յեռա :

Փոքրիկ եյի : Հեռացա :
Քո կարուաը զգացի :
Եսոր հասուն յես դարձա :
Յերկի՛ր, յերկի՛ր յերկաթի :

II

Ծովիդ կապույտ հայելին :
Նավե՛ր, նավե՛ր ծանրակող :
Ու անտառներ՝ նավթով լի —
Յերկի՛ր, յերկի՛ր իմ ծաղկո՛ղ :

Դեղինաչյա ավազուտ :
Բանվրական շենքեր մեծ :
Յերկինք՝ ծխոտ ու լազուր :
Ու դնացքներ՝ ծանրաբեռ . . .

Արագաթև թրամներ :
Ու ոթոներ սլացող :
Ժպտածիծաղ վառ դեմքեր :
Ու արեփ հուր խանձող :

Բագո՛ւ, Բագո՛ւ, ո՛, Բագո՛ւ,
Աշխատանքի գոռ քաղաք :
Քեղ կառուցում անդուլ
Յերկաթակուռ մի բանակ :

III

Ու թրթուաց խինդս խոր,
(Ես յե՞րբ եսքան սլացանք) :
Մենք հիմնեցինք կարստով
Գործարաններ ծխարձակ :

Առանք դերքեր դժվարին,
Առանք դյուղե՛ր, քաղաքներ :
Վորպես ծովե հորդ ալիք —
Մեր կուռ յերթը շառաչեց :

Մենք ուժեղ ենք ու համառ :
Մենք սովոր ենք բեռ ուսել :
Հենց այդ ե, վոր մենք հիմա՛
Դիծ ենք բոնել մի լուսե :

Յերդ իմ, խինդով կարկաչի՛ր,
Վորպես հստակ մի առու :
Յերդիդ խրո՛խտ, զի՛լ կանչից
Ինչքա՞ն դեմքեր են վառվում . . .

Բագո՛ւ, Բագո՛ւ, ո՛, Բագո՛ւ
Աշխատանքի գոռ քաղաք :
Քեղ կառուցում ե անդուլ —
Յերկաթակուռ մի բանակ :

24.09

ՃԵՐՄԱԿ ՎԱՐԴԵՐԻ ՅԵՐԳԸ

Դաշտերը հասել են,

Բամբակը դարսել ենք.

Ես ի՞նչ, ես ի՞նչ ձերմակ,

Ժպտացող վարսեր են:

Աղջիկ-տղա մեկտեղ

Քաղ են անում ահա՛.

Ես ի՞նչ ձերմակ բերդ ե,

Ես ի՞նչ ձերմակ վահան:

Յերգել, յերգել, յերգել

Ձերմակ բերքի մասին.

Ու ժպտում են զեմքեր—

Միասին, միասին:

Ավտոն դնաց արագ՝

Տեքստիլի դուռը.

Բամբակի հետ տարավ

Հաղթանակի լուրը:

Դաշտերը հասել են,

Բամբակը դարսել ենք,—

Ես ի՞նչ, ես ի՞նչ ձերմակ,

Ժպտացող վարսեր են:

ՑԱՆԿ

	Ց
1. Արևային գրին	3
2. Զագես	5
3. Գարուն	6
4. Հնձվոր աղջկան	7
5. Լենինյան մարշ	9
6. Գարնանյան մարշ	10
7. Զարկեր	11
8. Տողեր Ալլահվերդուն	13
9. Գյուղերի լիրիկան	14
10. Յերգս	17
11. Հանդիպում	18
12. Բազու	20
13. Ճերմակ վարդերի յերգը	22

ՍԵՐԱԳՐԻ Տ. ՏԻՐՈՒՆԻ և Ե.ՀԱՐՄԵԹԻՉԻՆԻ

ՊԵՏՐՈՎԱ Տ. ՊԵՏՐՈՎԱ 2284. ՏԻՐՈՒՆԻ 7563 (ր).

Հանձնված ե ապրիլի 17/V 1932 թ. Ստ. Ֆ. Բ.

Սարգսյանի և առաքելու 21/VII 1932 թ.

Ա. Ա. Խաչատրյան
Ա. Ա. Խաչատրյան

«Ազգային գրադարան



NL0365561

4120·50 ЧП9.

54398

Атанес Сеналян
СОЛНЕЧНЫЙ ШТУРМ

ГИЗ ССР Армении Эревань